թիք և Ասորիք ա՞զգ են ձեզ, թէ ոչ · նոքա ասեն, ոչ · Դատաւորք ասեն, եթէ ոչ են ձեզ ազգ, ընդէ՞ր պնդէք թէ մեզ հետեւողք են (եամազ)։ Ցոյնք ետուն պատասխանի · վասն այնորիկ՝ յորժամ տկարացին և պակասեցին յԵրուսաղէմէ, տեղիք և ստացուածք նոցին մեզ մնացեն։ Հայք ասեն · երեք ազգքն այնոքիկ 'ի վաղ ժամանակաց անտի հետեւողք են մեզ, եւ 'ի հրովարտակս մեր գրեալ է կրօնակից և համազգային։

Տեսեալ Դատաւորաց թէ երկարի վէճն 'ի վերայ այսր խնդրոյ, ասեն · մնացէ այժմ քննութիւնն հետեւակաց, զի նոքա չեն 'ի միջի և դուք հակառակ միմեանց վիճէք, պարտ է հարցանել ցնոյն իսկ հետեւակսն։ Թէպէտեւ ունէին Հայք վասն այսր Իլամ 'ի Դատաւորէն Երուսաղէմի, այլ ոչ ինչ զօրեաց այն։ Հայք ասեն, յառաջին դատին որ 'ի Դուռն Փաշայի, խոստացան մեզ Դատաւորք 'ի հասանել հրովարտակացն մերոց արտաքել զհետեւակս մեր, այժմ տեսանեմք յայլ եղանակ շրջեալ բանին։ Ժխտեաց Թահիր Էֆէնտի, որ գլուխ եկաց ընդ Էմին Պէկին 'ի դատաստանին յայնմիկ, և ասէ մեք ոչ ասացաք զայդ · Էմին Պէկն գոլով մեռեալ, 'ի սմանէ խնդրէին Հայք զհաստատութիւն բանին, այլ նա պնդէր թէ չիք մեր արարեալ զայդպիսի խոստմունս։ Հայք ասեն · են ոմանք յերեւելեաց անտի տակաւին կենդանի, որք էին 'ի ժողովի անդ։ Եուսուֆ Ակկիահ և Ազիզ Էֆէնտիք և այլք, կոչեցէք զնոսա և վերստին տեղեկացէք 'ի նոցանէ։ Հանին արտաքս զՀայս և զՅոյնս, և կոչեցին զարսն զայնոսիկ, որոց եկեալ ասացին թէ յայնժամ խոստացաւ Ատեանն Հայոց 'ի հասանել հրովարտակացն առնել զամենայն ինչ ըստ մտաց նոցին։ Փակեցաւ Ատեանն։

Եւ յետ երկուց աւուրց գրեցին Ատենակալք զվէճս երկուց ազգաց, և արարեալ զայն Իլամ մատուցին առ Արքայ, և մնաց առ նա 'ի ներքս 'ի պալատն իբր ամիս մի։

Նիստ Չորրորդ, ('ի 19 Մայիսի)։

Եւ Իլամն արտաքս 'ի պալատէն հրովարտակաւ Արքային, և առաքեցաւ 'ի դուռն մեծի զենպետին · ազգ ա-